Կարգապահական գործ թիվ ԿԳ-19070

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի հուլիսի 09-ի թիվ 164-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/105-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի և Արայիկ Ղազարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արամ Հովհաննիսյանին (արտոնագիր թիվ 564) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Քրիստինե Թումասյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Պալատ, հայտնել է, որ փաստաբան Արամ Հովհաննիսյանի հետ 07.02.2018 թվականին կնքել է փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագիր:

Դիմողը նշել է, որ փաստաբան Արամ Հովհաննիսյանի անգործության և ոչ ճիշտ մասնագիտական ծառայություններ մատուցելու պատճառով Արարատի մարզի դատախազության կողմից տրված մեկ ամիս ժամկետը բաց է թողնվել:

Դիմումին կից ներկայացրել է 07.02.2018 թվականին կնքված պայմանագրի պատճենը, փաստաբան Արամ Հովհաննիսյանի արտոնագրի պատճենը, Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից թիվ ԱՎԴ2/0007/11/18 գործով կայացված որոշումների պատճենները:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 18.03.2019թ. թիվ 131-Ա/ԿԳ-19070 որոշմամբ փաստաբան Արամ Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 564) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի

կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

21.03.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողի կողմից 27.03.2019թ. ներկայացվել է դիրքորոշում, որում վերջինս նշել է, որ փաստաբան Ա. Հովհաննիսյանի անգործության պատճառով, որն իր մեջ ներառել է միտումնավոր խարդախ քայլեր, հակասող իր մասնագիտական գործունեությանը, ինքը կրել է ծանր նյութական վնաս, այն է՝ իր միակ կացարանի կորուստը, որն էլ զուգորդված է եղել իր ծանր բարոյահոգեբանական ապրումներով, ինչի հետևանքով էլ հայտնվել է ծանր կացության մեջ:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Արամ Հովհաննիսյանը 25.02.2019 թվականին ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ այն ժամանակ, երբ իրեն դիմել է Մովսես Թումասյանն իրավական օգնություն ստանալու համար, նա մինչ այդ արդեն դիմել էր դատախազություն սնանկության կառավարիչ Հենրիկ Մարտիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու պահանջով, որի հիման վրա հարուցվել է քրեական գործ: Սակայն քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ Կ. Իսրաելյանը, իր 25.12.2017 թվականի որոշմամբ որոշել է քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության հիմքով: Նշված որոշումը Մովսես Թումասյանի կողմից բողոքարկվել է վերադաս դատախազին, սակայն վերադաս դատախազը՝ իր 25.01.2018թ. որոշմամբ, նույնպես այդ որոշումը թողել է անփոփոխ՝ վերջինիս ընձեռելով այն մեկամսյա ժամկետում դատական կարգով բողոքարկելու հնարավորություն:

Փաստաբան Արամ Հովհաննիսյանը հայտնել է նաև, որ դատական կարգով բողոքարկելու նպատակով Մովսես Թումասյանը, 19.02.2018թ դիմել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Գագիկ Սարգսյանին դատավոր Հ. Ենոքյանի վարույթում քննված թիվ ԱՎԴ/0039/04/13 սնանկության գործի նյութերին ծանոթանալու և անհրաժեշտ պատճենահանումներ կատարելու խնդրանքով, սակայն դատարանից պարզվել է, որ այդ գործի նյութերը Վայոց Ձորի մարզի քննչական բաժնի կողմից առգրավվել և ուղարկվել է Գլխավոր դատախազություն և այն գտնվում է հետաքննության և նախաքննության վերահսկողության վարչությունում: Վերը թվարկված գործողություններից հետո միայն Մովսես Թումասյանը դիմել է իրեն և ինքը, որպես փաստաբան Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել բողոք Արարատի մարզի դատախազության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ս. Հովհաննիսյանի 25.01.2018թ. բողոքը մերժելու մասին որոշման դեմ:

Փաստաբան Արամ Հովհաննիսյանը հայտնել է նաև, որ դատարանի 13.04.2018թ. որոշման հիման վրա ինքն այդ որոշման դեմ 25.04.2018թ. ներկայացրել է վերաքննիչ բողոք, սակայն, դա նույնպես որևէ արդյունք չի տվել և ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանն իր 01.06.2018թ. որոշմամբ բողոքը մերժել է: 10.07.2018թ. ներկայացրել է վճռաբեկ բողոք վերը նշված որոշման դեմ, սակայն այդ ամենը ապարդյուն և անարդյունք, քանի որ Մովսես Թումասյանը մինչև իրեն դիմելը, անգիտակցաբար արդեն իսկ կատարած է եղել մի շարք սխալ քայլեր բանկի հետ ունեցած իրավապայմանագրային հարաբերություններում և սնանկության կառավարիչը, օգտվելով իրենց անտեղյակ լինելուց, պայմաններ է ստեղծել տունը ձեռքներից վերցնելու համար, որի հետ ինքը ոչ մի առնչություն չունի:

Փաստաբան Արամ Հովհաննիսյանը նշել է նաև, որ այդքան աշխատանք կատարելու դիմաց Մովսես և Քրիստինե Թումասյանները իրեն վճարել են ընդամենը 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, չնայած, որ իրենք պայմանավորվել էին, որ նրանք իրեն պետք է ամսական այդքան վճարեին, ընդհանուրը 1.500 (հազար հինգ հարյուր) ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

03.04.2019 թվականին փաստաբան Արամ Հովհաննիսյանը ներկայացրել է բացատրություն և ըստ էության հաստատել նախկին բացատրությամբ նշված հանգամանքները: Վերջինս հայտնել է, որ Մովսես և Քրիստինե Թումասյանները դիմել են իրեն աջակցության ակնկալիքով և իրենց միջև 02.07.2018 թվականին կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր և որ ՀՀ Արարատի մարզի դատխազ Ս. Հովհաննիսյանի բողոքը մերժելու մասին 25.01.2018 թվականի որոշման դեմ բողոք ներկայացնելու նպատակով ինքը Քրիստինեին ասել է, որ բողոք գրելու համար իրեն անհրաժեշտ է ծանոթանալ սանանկության գործի նյութերի հետ: Այդ նպատակով, Մովսես Թումասյանի կին Քրիստինե Թումասյանը 17.02.2018 թվականին սնանկության գործի նյութերին ծանոթանալու համար ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի Վեդու նստավայր փոստով դիմում է ուղարկում, սակայն գործի նյութերին ծանոթանալ չի կարողացել, այդ նյութերը դատախազության կողմից առգրավված լինելու պատճառով, ինչի մասին Քրիստինեն Վեդու դատարանից տեղեկանում է 27.02.2018 թվականին հեռախոսով:

Փաստաբան Արամ Հովհաննիսյանը խորհրդի նիստին ներկայացել և ըստ էության հաստատել է նախկին բացատրություններում նշված հանգամանքները: Վերջինս մասնավորապես նշել է, որ ժամկետի բացթողումն իր կամքից անկախ է եղել, քանի որ բողոքը գրելու համար անհրաժեշտ էր որպեսզի իր մոտ ունենար անհրաժեշտ նյութեր, որոնք ինքը ձեռք է բերել մարտի 18-ից հետո, մինչդեռ բողոքարկման ժամկետը լրանում էր մարտի 1-ին և որ դատարանին բանավոր ներկայացրել է բաց թողած ժամկետը հարգելի համարելու միջնորդություն, քանի որ սահմանադրական դատարանն ունի որոշում, որով հակասահմանադրական է ճանաչել քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածը և փոփոխվել է և եթե մինչև սահմանադրական դատարանի որոշումը բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն տրամադրելը դիմողի, բողոքաբերի իրավունքն էր, ապա սահմանադրական դատարանի կողմից մասնակի հակասահմանադրական ճանաչելուց հետո դա դարձել է դատավորի պարտականությունը և եթե նա տեսնում էր, որ ժամկետը բաց է թողնվել մինչև նիստը սկսվելը պարտավոր էր

բողոքաբերին հարցնել արդյոք ունեք միջնորդություն բաց թողնված ժամկետը վերականգնելու ինչը այս դեպքում դատարանը չի կատարել, իրենից չի հարցրել թեև ինքը բանավոր ներկայացրել է միջնորդությունը, որը դատավորի կողմից մերժվել է:

Փաստաբան Արամ Հովհաննիսյանը նշել է նաև, որ դատախազի որոշումը ստացել է 07.02.2018 թվականին, իսկ Խորհրդի անդամի այն հարցին թե արդյոք դիմել է վարույթն իրականացնող մարմնին քրեական գործի նյութերը ստանալու համար, վերջինս պատասխանել է, որ դիմել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ դա կապված էր սնանկ ճանաչելու վճռի հետ: Պատասխանողը նաև նշել է, որ չի մտածել, որ նյութերը վերցնելուց հետո, նյութերը ստանալուց և բողոք գրելուց հետո կհաշվեն, որ ժամկետ է բաց թողել, այն դեպքում, երբ բողոքը իրավունք ունի գրելու այն ժամանակ, երբ արդեն բավարար նյութերը իր մոտ կան և այդ մեկամսյա ժամկետը չեն կարող իր վրա դնել, եթե դեռ ինքը նյութեր չունի:

Խորհրդի անդամի այն հարցին, որ վերաքննիչ դատարանը նշել է, որ բողոքը ներկայացվել է դատարան Մովսես Թումասյանի անունից, երբ դատախազին բողոք է բերել Քրիստինե Թումասյանը, այսինքն՝ Մովսես Թումասյանը բողոք բերած էլ չի եղել, որպեսզի կարողանաք բողոքարկել Պատասխանողը նշել է, որ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է հակասահմանադրական և հոդվածը վերաձևակերպվել է այն կերպ, որ քննիչի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու կամ հարուցված գործը կարճելու մասին որոշման դեմ բողոքարկելու դեպքում դատարան դիմելուց առաջ վերադաս դատախազին դիմելը պարտադիր չի դարձել և քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, որ անպայման այդ բոլոր ատյաններին պետք է դիմի նույն անձը:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

14.05.2019թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանը կազմել է եզրակացություն:

22.05.2019թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի հուլիս 09-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին*

ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Մովսես և Քրիստինե Թումասյանները դիմել են փաստաբան Արամ Հովհաննիսյանին իրավական օգնություն ստանալու համար: Մովսես Թումասյանին և փաստաբան Արամ Հովհաննիսյանի միջև 07.02.2018թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: Պայմանագրի առարկան կազմել է վստահորդի շահերի ներկայացումը ՀՀ իրավապահ մարմիններում, ինչպես նաև մատուցվող ծառայության ընթացքում անհրաժեշտ կազմակերպություններում: Պայմանագրի գինը սահմանվել է՝ 1.500 (մեկ հազար հինգ հարյուր) ԱՄՆ դոլար:

Նշված փաստերը հաստատվում են 07.02.2018թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով, Պատասխանողի բացատրություններով:

2. Դիմողը փաստաբան Արամ Հովհաննիսյանին վճարել է 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

Նշված փաստը հաստատվում է N 000111 վճարման հանձնարարգրի անդորրագրի պատճենով:

3. 02.04.2018 թվականին փաստաբան Արամ Հովհաննիսյանի կողմից Մովսես Թումասյանի անունից Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանին ներկայացվել է բողոք՝ ՀՀ Արարատի մարզի դատախազության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ս. Հովհաննիսյանի 25.01.2018 թվականի բողոքը մերժելու որոշման դեմ:

Նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, փաստաբան Արամ Հովհաննիսյանի կողմից բացատրությանը կից ներկայացված բողոքի պատճենով:

4. Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 13.04.2018 թվականի որոշմամբ Արարատի մարզի դատախազ Ս. Հովհաննիսյանի՝ «թիվ 44115816 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին» 25.01.2018 թվականին Մովսես Թումասյանի ներկայացուցիչ Արամ Հովհաննիսյանի ներկայացրած բողոքը մերժվել է ժամկետանց լինելու հիմքով:

Նշված փաստը հաստատվում է թիվ ԱՎԴ2/0007/11/18 Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 13.04.2018 թվականի որոշման պատճենով:

5. 26.04.2018 թվականին Վերաքննիչ դատարանում ստացվել է Մովսես Թումասյանի ներկայացուցիչ Արամ Հովհաննիսյանը Վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված 01.06.2018 թվականի որոշմամբ մերժվել է:

Նշված փաստը հաստատվում է Վերաքննիչ քրեական դատարանի կողմից 01.06.2018 թվականին կայացված վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշման պատճենով:

6. Մովսես Թումասյանի ներկայացուցիչ Արամ Հովհաննիսյանը ներկայացրել է Վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի կողմից կայացված 07.11.2018թ. որոշմամբ Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Նշված փաստը հաստատվում է Վճռաբեկ դատարանի կողմից 07.11.2018 թվականին կայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճենով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արամ Հովհաննիսյանի (արտոնագիր 564, ստացված՝ 20.10.2006թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործը):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արամ Հովհաննիսյանը ենթակա է պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով նշված կանոնները Պալատի Խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական

բարեխղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Պատասխանողի և Մովսես Թումասյանի միջև 07.02.2018 թվականին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի առարկան կազմել է՝ վստահորդի շահերի ներկայացումը ՀՀ իրավապահ մարմիններում, ինչպես նաև մատուցվող ծառայության ընթացքում անհրաժեշտ կազմակերպություններում:

Խորհուրդը հատկանշական է համարում այն հանգամանքը, որ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, բողոքը մերժելու որոշման հիմքում դրել է այն փաստը, որ վիճարկվող որոշումը՝ ժամանակին ստացված լինելու պայմաններում այն դատարան է բողոքարկվել դատախազի մերժման մասին որոշումն ստանալու օրվանից 1/մեկ/ ամիս 1/մեկ/ օր անց՝ խախտելով մերժման մասին տեղեկություն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքարկելու կարգը: Դատախազ Ա.Հովհաննիսյանի 25.01.2018 թվականի թիվ 59-դ-3/6-18 գրությամբ նշված որոշումն ուղարկվել է Քրիստինե Թումասյանին և վերջինս նշված որոշումն ստացել է **01.02.2018** թվականին:

Խորհուրդը կարևորում է այն հանգամանքը, որ Մովսես Թումասյանի և փաստաբան Արամ Հովհաննիսյանի միջև պայմանագիրը կնքվել է **07.02.2018** թվականին: Այսինքն՝ փաստաբան Արամ Հովհաննիսյանը գործը ստանձնելու պահին ունեցել է բավարար ժամանակ նշված որոշումը բողոքարկելու համար: Դեռ ավելին՝ եթե Պատասխանողը ողջամիտ կասկածներ ուներ, որ չէր կարող որոշումը բողոքարկել սահմանված ժամկետում ապա չպետք է ընդուներ իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը, մասնավորապես այդպիսի կարգավորում է նախատեսում Կանոնագրքի 3.1.8 ենթակետը, որի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Անդրադառնալով Պատասխանողի կողմից վկայակոչած ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 որոշմանը, Խորհուրդը արձանագրում է, որ որոշումը վերաբերում է օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասին, որը պարունակում է իրավական անորոշություն. նորմում հստակ չի նշվում՝ դատական ակտի հրապարակման, թե դատական ակտի պատճենն ստանալու պահից սկսած տասնհինգօրյա ժամկետում կարող է տվյալ դատական ակտը բողոքարկվել վերաքննիչ դատարան: Ուստի **սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տասնհինգօրյա ժամկետը մեկնարկում է համապատասխան դատական ակտը հասցեատիրոջ կողմից փաստացիորեն ստանալու կամ գործնականում օրենքով սահմանված կարգով նրան հասու լինելու պահից, և իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասի**

սահմանադրաիրավական բովանդակության այդպիսի ընկալմամբ:

Վերը նշվածից հետևում է, որ ՍԴՈ-1052 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումը սույն դեպքին վերաբերելի չէ:

Անդրադառնալով Պատասխանողի կողմից վկայակոչած ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-844 որոշմանը, Խորհուրդը արձանագրում է, որ որոշումը վերաբերում է հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց) իրավունքին, որը կարող է իրացվել հետևյալ նախապայմանների դեպքում.

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները և օրինական շահերը,
- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Վերջինիս դեպքում հետևում է, որ անձը դատախազի որոշումը կամ գործողությունը բողոքարկելիս պետք է դիմի նաև վերադաս դատախազին: Իսկ իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ նախապայմանի առաջադրումը վիճարկվող նորմի իրավակարգավորման շրջանակներում խոչընդոտ չի կարող հանդիսանալ անձի բողոքն ըստ էության քննելու համար:

Այսպիսով, ինչպես վկայում է վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իրավունքն իրացնելիս նախ պարտավոր է դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադատության մատչելիության իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արամ Հովհաննիսյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում, ինչի համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգա.նք (...):

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է կիրառել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Քրեական դատավարություն» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արամ Հովհաննիսյանին (արտոնագիր թիվ 564) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.7.2.և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արամ Հովհաննիսյանի (արտոնագիր թիվ 564) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն և իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ 6 ամսվա ընթացքում Քրեական դատավարություն թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

09 հուլիսի 2019թ.
թիվ ԿԳ/105-Ա
ք. Երևան